

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Նախագիծ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

<<ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

**Հոդված 1.** <<Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-223-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում <<Նախագահը>> բառերը փոխարինել <<վարչապետը>> բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 32-րդ հոդվածի՝

- 1) 3-րդ մասում <<3>> թիվը փոխարինել <<2>> թվով,
- 2) 3-րդ և 4-րդ մասերում <<Նախագահին>> բառերը փոխարինել <<վարչապետին>> բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում <<36-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ>> բառերը փոխարինել <<37-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ>> բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ և 6-րդ գլուխներն ուժի մեջ մտնելու օրվանից: